

*ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐԿՄԱՆ ՈՇԺԻՄ

Ընդհանուր հարկման ռեժիմ – Մտեփասնակերպ, 2016, 48 էջ

Նոր ստեղծված հարկ վճարողներին հասցեագրված այս ուղեցույցում շարադրված են ընդհանուր հարկման ռեժիմի վերաբերյալ օգտակար և կարևոր տեղեկություններ, որոնց իմացությունը բիզնեսն արդյունավետ կազմակերպելու և հնարավոր սխալներից խուսափելու անհրաժեշտ պայմաններից է:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐԿՄԱՆ ՌԵԺԻՄ

ԼՂՀ-ում սահմանված են հարկերի հետևյալ տեսակները՝

շահութահարկ,
եկամտային հարկ,
ակցիզային հարկ,
ավելացված արժեքի հարկ,
գույքահարկ,
հողի հարկ:

Գործունեության որոշ տեսակների համար սահմանված են ավելացված արժեքի հարկին (այսուհետ՝ ԱԱՀ) և (կամ) շահութահարկին փոխարինող հաստատագրված վճարներ, առևտրի հարկ կամ արտոնագրային վճարներ:

Ընդհանուր հարկման ռեժիմով գործող հարկ վճարողները կրում են շահութահարկի (եկամտային հարկի), ԱԱՀ-ի, օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ ակցիզային հարկի, ավտոճանապարհային մասհանումների, գույքահարկի, հողի հարկի հաշվարկման և վճարման պարտավորություն:

ԻՆՉ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՄԱՆԱԿ ԾԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ

ԼՂՀ-ում շահութահարկի որոշման և վճարման հետ կապված հարաբերությունները, շահութահարկ վճարողների շրջանակը, շահութահարկի դրույքաչափերը, հաշվարկման և վճարման կարգը սահմանված են «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքով:

Ովքե՞ր են շահութահարկ վճարում

ԼՂՀ-ում շահութահարկ են վճարում (հարկատու են) ԼՂՀ **ռեզիդենտները և ոչ ռեզիդենտները**, բացառությամբ ԼՂՀ պետական կառավարչական հիմնարկների, ԼՂՀ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների՝ բյուջետային հատկացումների և ամբողջությամբ բյուջե փոխանցվող եկամուտների մասով:

Ռեզիդենտների համար **հարկվող օբյեկտ** է համարվում ԼՂՀ տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը, իսկ ոչ ռեզիդենտների համար՝ ԼՂՀ աղբյուրներից ստացվող հարկվող շահույթը:

Հարկվող շահույթը = Համախառն եկամուտ – Նվազեցումներ (ծախսեր, կորուստներ և այլ նվազեցումներ) >0

Եկամուտների և ծախսերի հաշվառումն իրականացվում է **հաշվեգրման եղանակով**. Եկամուտները և ծախսերը հաշվառվում են այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու կամ դրա համար այդ ծախսերը ճանաչելու պահից՝ անկախ եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից:

Ո՞րն է համախառն եկամուտը

Համախառն եկամուտը հաշվետու տարում կազմակերպության ստացած բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից: Սակայն եկամուտների որոշ տեսակներ չեն ներառվում համախառն եկամտի մեջ և դրանցից չի հաշվարկվում և վճարվում շահութահարկ:

Նշենք դրանցից մի քանիսը՝

- ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացած ակտիվները (օրինակ՝ բարեգործական հանգանակությունները, շնորհները), անդամավճարները,
- արտարժույթի վերագնահատման դրական արդյունքը,
- բաժնետերերի, փայտերերի կողմից կանոնադրական կապիտալում կատարված ներդրումները:

Համախառն եկամտի մեջ չներառվող եկամուտների տեսակների ամբողջական ցուցակը կարելի է գտնել «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 3-րդ գլխում:

Որո՞նք են նվազեցումները

Նվազեցումները լինում են 3 տեսակի՝

- ծախսեր,

- կորուստներ (բնական, փաստացի այլ կորուստներ և պատահական),

- այլ նվազեցումներ (հարկային վնասը, շահաբաժինները, ոչ առևտրային կազմակերպություններին կատարված բարեգործական հատկացումները (բայց ոչ ավելի, քան համախառն եկամտի 0.25 %-ը) և այլն):

Ծախսերը նվազեցվում են համախառն եկամտից միայն այդ եկամուտների ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված լինելու դեպքում: Ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանված են ԼՂՀ կառավարության 26.12.2000թ. «Ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանելու և այդ փաստաթղթերի կազմման կարգը հաստատելու մասին» N 254 որոշմամբ:

Բնական կորուստները նվազեցվում են համախառն եկամտից միայն փաստաթղթերով հիմնավորված լինելու դեպքում ԼՂՀ կառավարության կողմից սահմանված չափերի սահմաններում: Բնական կորուստներ են, օրինակ, ֆիզիկոքիմիական պրոցեսների և օդերևութաբանական գործոնների ազդեցությամբ առաջացած կորուստները:

Փաստացի այլ կորուստների համար նորմաներ սահմանված չլինելու դեպքում նյութաձախսի կորուստները համախառն եկամտից նվազեցվում են ոչ ավելի, քան համախառն եկամտի 1 %-ի չափով (տարեկան): Փաստացի այլ կորուստներ են, օրինակ, սննդամթերքի, դեղերի և օրգանական ծագում ունեցող այլ նյութերի, ապրանքների պիտանիության ժամկետն անցնելու դեպքում առաջացած կորուստները:

Պարսեհական կորուստները դրանք հրդեհի, ջրհեղեղի, երկրաշարժի կամ այլ տարերային աղետի ժամանակ գույքի փաստացի կորուստներն են, որոնք համախառն եկամտից նվազեցվում են փաստաթղթերով հիմնավորված լինելու դեպքում:

Շահութահարկի դրույքաչափը

Ռեզիդենտի կողմից շահութահարկը հաշվարկվում է հարկվող շահույթի նկատմամբ **10 %** դրույքաչափով, իսկ վարկային կազմակերպությունների, բանկերի, ապահովագրական ընկերությունների, վերա-ապահովագրական ընկերությունների, արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց, գրավատների, արտարժույթի առք ու վաճառքի և

արտարժույթի դիլերային-բրոքերային առք ու վաճառքի, մետաղական օգտակար հանածոների արդյունահանման և (կամ) մետաղի խտանյութի արտադրության (վերամշակման), վառելիքաէներգետիկ հումքի արդյունահանման և (կամ) արտադրության (վերամշակման) գործունեություն իրականացնող անձանց, հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառում (բացառությամբ տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման) լիցենզավորված գործունեություն իրականացնող անձանց՝ գործունեության այդ մասով ստացած եկամուտների, ինչպես նաև ստացվող այլ եկամուտների դիմաց՝ **20 %** դրույքաչափով:

ԼՂՀ-ում ստորաբաժանում կամ վայր չունեցող ոչ ռեզիդենտի կողմից ԼՂՀ աղբյուրներից ստացվող եկամուտների հարկումը կատարում է հարկային գործակալը հետևյալ չափերով.

Եկամտի տեսակը	Շահութահարկի չափը տոկոսներով
ապահովագրական հատուցումներ, վերաապահովագրական վճարներ և փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտներ	4
շահաբաժիններ, տոկոսներ, ռոյալթի-ներ, գույքը վարձակալության տալուց ստացած եկամուտ, գույքի արժեքի հավելած և այլ պասիվ եկամուտներ (բացի փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտներից)	6
ոչ ռեզիդենտի ստացած այլ եկամուտներ, ինչպես նաև ԼՂՀ տարածքից դուրս ԼՂՀ ռեզիդենտին կամ այլ ոչ ռեզիդենտի՝ ԼՂՀ-ում հաշվառված առանձնացված ստորաբաժանմանը մատուցվող ծառայությունների դիմաց ստացված եկամուտներ	10

Շահութահարկի արտոնությունները

Գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված հարկատուները իրենց կողմից արտադրված գյուղատնտեսական ար-

տաղրանքի իրացումից ստացված եկամտի, ինչպես նաև հիմնական միջոցների և այլ ակտիվների իրացումից ստացված և այլ եկամուտների մասով, եթե վերջիններիս տեսակարար կշիռը համախառն եկամտի մեջ չի գերազանցում 10 %-ը, ազատվում են շահութահարկի վճարումից:

Հարկատուի հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է հարկատուի մոտ վարձու աշխատող յուրաքանչյուր հաշմանդամի համար հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների 150 %-ի չափով:

Հարկատուի հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է (աշկերտության պայմանագրի գործողության ողջ ժամանակահատվածում) հարկատուի մոտ վարձու աշխատող՝ արհեստագործական ուսումնական հաստատությունում սովորող յուրաքանչյուր աշկերտի համար հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների 150 %-ի չափով:

Շահութահարկի վճարման և հաշվարկների ներկայացման ժամկետները Ռեզիդենտները ներկայացնում են՝

շահութահարկի հաշվարկ՝ յուրաքանչյուր տարվա արդյունքներով՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 20-ը, իսկ շահութահարկի գումարը վճարում պետական բյուջե մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 20-ը (ներառյալ)։

անփոփ հաշվարկ՝ ոչ ռեզիդենտներին վճարված եկամուտների, պահված և բյուջե վճարված շահութահարկի գումարների մասին եռամսյակը մեկ՝ մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը, իսկ շահութահարկի գումարը վճարում բյուջե ոչ ռեզիդենտին եկամուտների վճարման ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ:

Ոչ ռեզիդենտները (եթե ԼՂՀ-ում գրանցված է վերջինիս առանձնացված ստորաբաժանումը) հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 20-ից ոչ ուշ հարկային մարմիններ են ներկայացնում վերադաս հարկային մարմնի կողմից հաստատված ձևով տարեկան եկամուտների մասին հաշվարկ, որտեղ ներառվում են դարաբաղյան աղբյուրներից ստացված բոլոր եկամուտները: Հաշվարկների (վերջնահաշվարկի) իրականացումից հետո պետական բյուջե լրացուցիչ վճարման ենթակա շահութահարկը վճարվում է, կամ գերավճարը հատուցվում է

մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 20-ը (ներառյալ)՝ ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Շահութահարկի կանխավճարների կատարումը

Ռեզիդենտները նախորդ տարվա շահութահարկի գումարը 100.0 հազար դրամը գերազանցելու դեպքում կատարում են կանխավճարների մուծումներ նախորդ տարվա շահութահարկի փաստացի գումարի (շահութահարկի հաշվարկային մեծությամբ) 1/16-ի չափով յուրաքանչյուր ամիս՝ տվյալ ամսվա 20-ից ոչ ուշ:

Ոչ ռեզիդենտները նախորդ տարվա շահութահարկի գումարը 2 մլն դրամը գերազանցելու դեպքում կատարում են կանխավճարների մուծումներ՝ նախորդ տարվա շահութահարկի փաստացի գումարի մեկ քառորդի չափով՝ հավասար բաժիններով՝ մինչև հաշվետու տարվա հուլիսի 1-ը և դեկտեմբերի 31-ը:

Օրենքի պահանջները խախտելու համար սահմանված պատասխանատվությունը

Հարկային մարմին ներկայացված շահութահարկի հաշվարկում օրենքով սահմանված կարգով հաշվարկված վնասն ավել ցույց տալու դեպքում ռեզիդենտ հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ ավել ցույց տված վնասի 10 %-ի չափով, իսկ շահութահարկի 20 % դրույքաչափով հարկվող գործունեություն իրականացնող ռեզիդենտներից՝ ավել ցույց տված վնասի 20 %-ի չափով:

Շահութահարկը աղբյուրի մոտ չպահելու (չգանձելու) դեպքում հարկային պարտավորությունը (և շահութահարկը սահմանված ժամկետներում բյուջե չվճարելու համար ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված տույժերը) կրում է հարկային գործակալը:

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿ

ԼՂՀ-ում եկամտային հարկի հաշվարկման և վճարման հետ կապված հարաբերությունները, հարկ վճարողների շրջանակը, դրույքաչափերը, հաշվարկման և վճարման կարգը սահմանված են «Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքով:

Ովքե՞ր են եկամտային հարկ վճարում

ԼՂՀ-ում եկամտային հարկ վճարողներ են համարվում ԼՂՀ ռեզիդենտ և ԼՂՀ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերը:

«Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքի իմաստով *ռեզիդենտ* է համարվում այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում (հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ) սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել է ԼՂՀ-ում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, կամ որի կենսական շահերի կենտրոնը ԼՂՀ-ում է, ինչպես նաև ԼՂՀ-ում պետական ծառայության մեջ գտնվող ժամանակավորապես ԼՂՀ տարածքից դուրս աշխատող ֆիզիկական անձը:

Կենսական շահերի կենտրոն է համարվում այն վայրը, որտեղ կենտրոնացված են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Մասնավորապես համարվում է, որ ֆիզիկական անձի կենսական շահերի կենտրոնը ԼՂՀ-ում է, եթե այնտեղ է գտնվում տունը կամ բնակարանը (որտեղ բնակվում է նրա ընտանիքը) և նրա (ընտանիքի) անձնական կամ ընտանեկան հիմնական գույքը կամ հիմնական տնտեսական (պրոֆեսիոնալ) գործունեության իրականացման վայրը:

«Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքի իմաստով *ոչ ռեզիդենտ* է համարվում այն ֆիզիկական անձը, որը չի բավարարում վերոնշյալ նկարագրին:

Հարկվող եկամուտը

Հարկվող եկամուտը ֆիզիկական անձի հաշվետու ժամանակաշրջանի համախառն եկամտի և «Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է:

Օրենքով սահմանված նվազեցումներ են՝

- նվազեցվող եկամուտները,
- ծախսերը:

Տարեկան եկամուտների հաշվարկ ներկայացնող անհատ ձեռնարկատերերը տարեկան համախառն եկամուտը կարող են նվազեցնել ձեռնարկատիրական գործունեության եկամուտների ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չա-

փով: Ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանված են ԼՂՀ կառավարության 26.12.2000թ. N 254 որոշմամբ: Անհատ ձեռնարկատիրոջ կատարած ծախսերը (այդ թվում՝ էլեկտրաէներգիայի, կապի և կոմունալ այլ ծախսերը) համարվում են ձեռնարկատիրական գործունեության գծով փաստաթղթերով հիմնավորված ծախսեր, եթե դրանք կատարվել են որպես անհատ ձեռնարկատեր: Եթե ձեռնարկատիրական գործունեության գծով արդյունքը բացասական է, ապա այն՝ որպես հաշվետու տարվա ձեռնարկատիրական գործունեությունից վնաս, փոխանցվում է վնասի ստացման տարվան հաջորդող 3 տարիներ և կարող է նվազեցվել միայն հետագա տարիներում ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներից:

Համախառն եկամուտը և նվազեցվող եկամուտները

Համախառն եկամուտը հաշվետու ժամանակաշրջանում հարկ վճարողի ստացած (ստացման ենթակա) բոլոր եկամուտների հանրագումարն է: Եկամուտ է համարվում ձեռնարկատիրական գործունեությունից, աշխատանքային պայմանագրերի շրջանակներում ստացման ենթակա, քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կամ ցանկացած այլ հիմքով ստացված գույքը (դրամական և բնամթերային (ոչ դրամական) ձևով եկամուտները): Սակայն եկամտի որոշ տեսակներ՝ ներառվելով համախառն եկամտի մեջ, միաժամանակ նվազեցվում են այդ եկամտից: Համախառն եկամտից նվազեցվող եկամուտների տեսակները սահմանված են «Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքի 6-8-րդ հոդվածներով:

Եկամտային հարկի հաշվարկումը

Ֆիզիկական անձը եկամտային հարկը վճարում է՝

- եկամուտը վճարող կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ (այսուհետ՝ հարկային գործակալ) միջոցով, որոնք անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձին օրենքով սահմանված եկամուտներ վճարելիս (իսկ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների դեպքում՝ հաշվարկելիս)՝ յուրաքանչյուր վճարման (հաշվարկման) դեպքում, կրում են եկամտային հարկը հաշվարկելու, պահե-

լու և բյուջե փոխանցելու պարտավորություն,

- ինքնուրույնաբար՝ «Տարեկան եկամուտների մասին» հաշվարկով, երբ ֆիզիկական անձի (այդ թվում՝ անհատ ձեռնարկատիրոջ) ստացած եկամուտները չեն հարկվել հարկային գործակալների միջոցով: Օրենսդրությամբ սահմանված դեպքերում հարկային գործակալի պարտականություններից ազատված գործատուների աշխատողները եկամտային հարկի պարտավորությունը նույնպես կատարում են ինքնուրույնաբար՝ «Եկամտային հարկի ամսական» պարզեցված հաշվարկով:

Եկամտային հարկի հաշվարկման բանաձևը և դրույքաչափերը

- **Հարկային գործակալի միջոցով՝** ամսական հարկվող եկամուտներից՝

$$\text{Եկամտային հարկը} = \text{Ամսական հարկվող եկամուտ} \times 21 \%$$

$$\text{Ամսական հարկվող եկամուտը} = \text{Ամսական համախառն եկամուտ} - \text{Նվազեցվող եկամուտ}$$

- Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց ռոյալթիներից, գույքի վարձակալությունից ստացված եկամուտներից և ֆիզիկական անձանցից գույք ձեռք բերելու դիմաց վճարվող եկամուտներից **հարկային գործակալը** եկամտային հարկը հաշվարկում է առանձին 6 % դրույքաչափով, իսկ օտարերկրյա քաղաքացիների ռոյալթիներից, գույքը վարձակալության տալուց ստացված եկամուտներից, գույքի արժեքի հավելածից՝ 10 % դրույքաչափով, ապահովագրական հատուցումներից և փոխադրման (ֆրախտի) դիմաց վճարվող եկամուտներից 5 % դրույքաչափով՝ առանց որևէ նվազեցման:

- ԼՂՀ քաղաքացիներին վճարվող տոկոսների դիմաց եկամտային հարկը հաշվարկվում է 5 % դրույքաչափով՝ հաշվի չառնելով օրենքով սահմանված նվազեցումները, իսկ օտարերկրյա քաղաքացիներին՝ 10 % դրույքաչափով՝ առանց որևէ նվազեցման:

- Այն դեպքում, երբ հարկային գործակալը ֆիզիկական անձին վճա-

րում է եկամուտ՝ առանց գրավոր պայմանագիր (օրենքով պահանջվող տվյալների պարտադիր նշումով) կնքելու (բացառությամբ՝ աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման դիմաց եկամուտներ վճարելիս) **եկամտային հարկը** հաշվարկում և պահում է 10 % դրույքաչափով՝ վճարված եկամուտների նկատմամբ՝ առանց հաշվի առնելու սույն օրենքով սահմանված նվազեցումները, բացառությամբ այն դեպքերի, երբ հարկ վճարողին վճարված եկամուտները հիմնավորվել են հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոններով կամ կրճատ հաշիվ-ապրանքագրերով:

Հարկային գործակալները յուրաքանչյուր ամիս 21 % դրույքաչափով հաշվարկում են եկամտային հարկը՝ դրանից պակասեցնելով վարձու աշխատողների (ԼՂՀ քաղաքացի, օտարերկրացի) համար հաշվարկված և տվյալ ամսում պետական բյուջեի հաշվին վճարվող՝ փաստացի վճարված ժամանակավոր անաշխատունակության նպաստների գումարները (ժամանակավոր անաշխատունակության նպաստները պակասեցված են համարվում պակասեցման ամսվան հաջորդող ամսվա 20-ից):

• **Ընդհանուր հարկման ռեժիմով գործող** անհատ ձեռնարկատերերի կողմից եկամտային հարկը հաշվարկվում է տարեկան հարկվող եկամուտներից՝

$$\text{Եկամտային հարկ} = \text{Տարեկան հարկվող եկամուտ} \times 21 \%$$

$$\text{Տարեկան հարկվող եկամուտը} = \text{Տարեկան համախառն եկամուտ} - \text{Նվազեցվող եկամուտ} - \text{Ծախսեր}$$

Անհատ ձեռնարկատերերը՝ որպես այդպիսին ստացած ռոյալթիներից, վարձակալական վճարներից և տոկոսներից եկամտային հարկը հաշվարկում են տարեկան դրույքաչափով:

Եկամտային հարկի դրույքաչափերը

Եկամտի տեսակ	Գրույքաչափ	
	ԼՂՀ քաղաքացի	Օտարերկրացի
1. Աշխատավարձ, դրան հավասարեցված եկամուտներ	21%	
2. Ռոյալթի	6%	10%
3. Տոկոս	5%	10%
4. Շահում	21%	
5. Սրբանակ	21%	
6. Նվիրատվություն, օգնություն	21%	
7. Ապահովագրական հատուցում	21%	5%
8. Գույքն օտարելու դիմաց եկամուտ	6%	x
9. Գույքի արժեքի հավելած	x	10%
10. Վարձավճար	6%	10%
11. Փոխադրման (ֆրախտի) դիմաց եկամուտ	21%	5%
12. Ֆիզիկական անձի համար ապահովագրավճար	21%	
13. Կամավոր կենսաթոշակներ	6%	
14. Չհիմնավորված վճարումներ	10%	
15. Նվազեցման կատարման տարվան հաջորդող 12-ամսյա ժամանակահատվածում չվճարված պասիվ եկամուտներ	10%	
16. Այլ եկամուտներ	21%	
17. Ձեռնարկատիրական գործունեությունից հարկվող եկամուտներ, այդ թվում՝		
17.1 Ընդհանուր հարկման ռեժիմ	21%	
17.2 Առևտրի հարկով հարկման ռեժիմ	10 %, բայց ոչ պակաս 60.0 հազար դրամից	
17.3 Հաստատագրված վճարով հարկման ռեժիմ	10 %, բայց ոչ պակաս 60.0 հազար դրամից	

Եկամտային հարկի հաշվետվությունների բացառապես էլեկտրոնային եղանակով ներկայացումը և հարկի վճարման ժամկետները

Հարկային գործակալը պարտավոր է յուրաքանչյուր ամսվա համար այդ ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնել՝

1) նոր աշխատողի (այդ թվում՝ վարձու աշխատողի) համար *գրանցման հայտ* (բացառությամբ ԼՂՀ-ում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) չունեցող օտարերկրյա քաղաքացի և քաղաքացիություն չունեցող անձ հանդիսացող աշխատողների), որտեղ ներառվում են անհատական տեղեկություններ (անունը, ազգանունը, հայրանունը, բնակության (հաշվառման) վայրը, հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական քարտի համարը), ինչպես նաև ԼՂՀ կառավարության կողմից սահմանված այլ տեղեկություններ:

Նոր աշխատողի համար գրանցման հայտը հարկային մարմին է ներկայացվում այդ աշխատողի գրանցման օրն ընդգրկող հաշվետու ամսվա եկամտային հարկի ամփոփ հաշվարկը հարկային մարմին ներկայացնելուց ոչ ուշ:

2) *եկամտային հարկի ամփոփ հաշվարկ*, որտեղ ներառվում են տվյալ հարկային գործակալից եկամուտներ ստացող ֆիզիկական անձանց համար հաշվարկված (քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) դիմաց վճարված) եկամուտների, այդ եկամուտներից պահված եկամտային հարկի վերաբերյալ անհատական տեղեկություններ:

Վարձու աշխատողներին տվյալ ամսվա համար աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ հաշվարկելիս, ինչպես նաև տվյալ ամսում այլ ֆիզիկական անձանց պասիվ եկամուտներ և (կամ) քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) դիմաց եկամուտներ վճարելիս պահված եկամտային հարկը հարկային գործակալը պարտավոր է պետական բյուջե վճարել եկամուտների հաշվարկման (վճարման) ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ:

3) Հարկ վճարող ֆիզիկական անձինք պարտավոր են հարկային տարվա համար մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա ապրիլի 20-

ը ներառյալ *բացառապես էլեկտրոնային եղանակով* հարկային մարմին ներկայացնել *տարեկան եկամուտների հաշվարկ*: Եկամտային հարկի գումարը ենթակա է վճարման պետական բյուջե հաշվետու տարվան հաջորդող տարվա մայիսի 1-ից ոչ ուշ:

Եկամտային հարկի կանխավճարների կատարումը

Հաշվետու տարվա ընթացքում ձեռնարկատիրական գործունեությանից (բացառությամբ հաստատագրված վճարներով և (կամ) առևտրի հարկով հարկվող գործունեության) եկամուտներ ստացող անհատ ձեռնարկատերը պարտավոր է կատարել եկամտային հարկի եռամսյակային կանխավճարներ՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 20-ը: Կանխավճարների եռամսյակային գումարները հաշվարկվում են նախորդ տարվա եկամտային հարկի փաստացի գումարի 18.75 %-ի չափով:

«Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքի պահանջները խախտելու համար սահմանված պատասխանատվությունը

Եկամտային հարկը եկամտի վճարման աղբյուրի մոտ չպահելու (չգանձելու) կամ պակաս պահելու (գանձելու) դեպքում հարկի գումարը և հարկը սահմանված ժամկետներում պետական բյուջե չվճարելու համար «Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 23-րդ հոդվածով սահմանված կարգով և չափով հաշվարկված տույժերը վճարելու պարտավորությունը կրում է հարկային գործակալը:

Աշխատողի աշխատանքի ընդունումը ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի կամ գրավոր պայմանագրի բացակայության) փաստը լիազոր մարմնի կողմից ԼՂՀ կառավարության սահմանած կարգով արձանագրվելու դեպքում գործատուն (այդ թվում՝ ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չգրանցված և արտոնագրային վճար վճարող չհանդիսացող) յուրաքանչյուր չձևակերպված վարձու աշխատողի համար վճարում է եկամտային հարկ ստորև բերված աղյուսակում նշված չափերով՝

Չձևակերպված աշխատողների քվաքանակը	Հարկի չափը՝ յուրաքանչյուր չձևակերպված աշխատողի համար
1-ից 3-ը	60.0 հազ. դրամ
4-ից 6-ը	150.0 հազ. դրամ
7-ից 9-ը	300.0 հազ. դրամ
10 և ավելի	600.0 հազ. դրամ

Հարկային մարմին ներկայացված եկամտային հարկի հաշվարկում օրենքով սահմանված կարգով հաշվարկված վնասն ավել ցույց տալու դեպքում անհատ ձեռնարկատիրոջից գանձվում է տուգանք՝ ավել ցույց տրված վնասի 21 %-ի չափով:

ԱԿՑԻՉԱՅԻՆ ՀԱՐԿ

Ակցիզային հարկը ենթակցիզային ապրանքների ներմուծման կամ ԼԳՀ տարածքում այդ ապրանքներն արտադրողների կողմից դրանց օտարման համար օրենքով սահմանված կարգով և չափով բյուջե վճարվող անուղղակի հարկ է:

Ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներն են՝ գարեջուրը, խաղողի և այլ գինիները, սպիրտը (բացառությամբ խաղողի գինեկոթից ստացված կոնյակի սպիրտի) և սպիրտային խմիչքները, ծխախոտի արդյունաբերական փոխարինիչները, սիգարները, սիգարետները և սիգարետները՝ ծխախոտով կամ դրա փոխարինիչներով, բենզինը, հում նավթը և նավթամթերքները, դիզելային վառելիքը, նավթային գազերը և գազանման այլ ածխաջրածինները (բացառությամբ բնական գազի):

Ովքե՞ր են ակցիզային հարկ վճարում

Ակցիզային հարկ վճարում են ենթակցիզային ապրանքներ ներմուծող կամ արտադրող (ներառյալ՝ շալցնող կամ այլ կերպ տարայավորող) իրավաբանական (այդ թվում՝ օտարերկրյա իրավաբանական անձանց ԼԳՀ-ում սահմանված կարգով գրանցված ներկայացուցչու-

թյունները և մասնաճյուղերը) և ֆիզիկական անձինք:

«Ակցիզային հարկի մասին» ԼՂՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանվում են ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ակցիզային հարկով հարկման դրույքաչափերը:

Ակցիզային հարկի արտոնությունները

Ակցիզային հարկով հարկման ենթակա չէ՝

- ԼՂՀ-ից ակցիզային հարկով հարկման ենթակա արտահանված ապրանքների օտարումը (իրացումը),

- «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմից տարբերվող մաքսային ռեժիմներով հանրապետության տարածք ներմուծվող և այդ տարածքից արտահանվող ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքները,

- օրենսդրությամբ սահմանված կարգով բռնագրավված, պետությանը հանձնված տիրազուրկ և ժառանգության իրավունքով պետությանն անցած ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ներմուծումը և օտարումը,

- մաքսային օրենսդրությամբ սահմանված՝ ապրանքների քանակը կամ մաքսային արժեքը չգերազանցող չափով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից ԼՂՀ ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքները:

Ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների դրոշմավորումը

Որպես կանոն, ենթաակցիզային ապրանքները գտնվում են պետական հատուկ հսկողության ներքո: Մասնավորապես.

ԼՂՀ կառավարությունը սահմանում է ԼՂՀ-ում արտադրվող ԱՏԳ ԱԱ-2203, 2204, 2205, 2206, 2207, 2208, 2402 ծածկագրերին դասվող ապրանքների հանրապետության տարածքում հարկային հսկողության ու հաշվառման կարգ, այդ թվում՝ իրացման քանակների հաշվառման հատուկ կարգ և պահանջներ, նշված ապրանքների դրոշմավորման, դրոշմանիշների ձևին, տրամադրմանը, օգտագործմանը, վերադարձմանը, ինչպես նաև դրոշմավորված ապրանքների իրացմանը ներկայացվող պահանջներ:

ԼՂՀ (ՀՀ-ից բացի) ներմուծվող՝ ԱՏԳ ԱԱ-2203, 2204, 2205, 2206, 2207, 2208, 2402 ծածկագրերին դասվող ապրանքների ներմուծման մաքսային հսկողության ու հաշվառման կարգը, նշված ապրանքների դրոշմավորման, դրոշմանիշների ձևին, տրամադրմանը, օգտագործմանը, վերադարձմանը, ինչպես նաև դրոշմավորված ապրանքների իրացմանը ներկայացվող պահանջները սահմանում է ՀՀ կառավարությունը:

Ակցիզային դրոշմանիշներ ձեռք բերելու համար հարկային մարմին ներկայացվում են՝

- դիմում՝ 2 օրինակից,
- ակցիզային դրոշմանիշների ձեռքբերման համար վճարված գումարը հաստատող փաստաթղթի պատճենը,
- հարկային մարմնի սահմանած ձևով հաշվետվություն՝ ձեռք բերված ակցիզային դրոշմանիշների օգտագործման մասին,
- արտադրողների (ներառյալ՝ շալցում իրականացնողների) կողմից որպես հումք ձեռք բերված սպիրտի ձեռքբերման հաշվարկային փաստաթղթերի պատճենները,
- լիցենզիայի և տարեկան պետական տուրքի վճարման անդորրագրի ու համապատասխանության սերտիֆիկատի (պարտադիր լինելու դեպքում) պատճենները:

Ակցիզային դրոշմանիշները տրամադրվում են նշված փաստաթղթերի և արտադրողների մոտ հարկային մարմինների կողմից արտադրական կարողությունների ուսումնասիրության վերաբերյալ կազմված տեղեկանքի հիման վրա: Հարկային մարմինն ակցիզային դրոշմանիշները տրամադրում է փաստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող յոթ աշխատանքային օրվա ընթացքում: Ակցիզային դրոշմանիշներ չեն տրամադրվում, եթե դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ արտադրական հզորությունները չեն համապատասխանում պահանջվող քանակին կամ ակցիզային հարկի գծով գերավճարը քիչ է պահանջվող դրոշմանիշների համար վճարման ենթակա գումարից: Այս դեպքում հայտը կարող է բավարարվել մասնակի՝ գերավճարի գումարին կամ արտադրական հզորություններին համապատասխան:

ԼՂՀ-ում արտադրվող պարտադիր դրոշմավորման ենթակա էթիլային սպիրտի արտադրանքի համար նախատեսված ակցիզային յուրաքանչյուր դրոշմանիշի ձեռքբերման համար վճարվում է 100 դրամ, ալ-

կոհոլային խմիչքի արտադրանքի համար՝ 50 դրամ, ծխախոտի արտադրանքի համար՝ 25 դրամ:

Հարկ վճարողների կողմից ակցիզային դրոշմանիշների ձեռքբերման համար վճարված գումարը համարվում է հաշվարկված ակցիզային հարկի կանխավճար:

Ակցիզային հարկ վճարող անձանց կողմից 2204, 2205, 2206, 2207 և 2208 ծածկագրերին դասվող ապրանքները որպես հումք օտարելու դեպքում, գնորդի պահանջով, պարտադիր լրացվում է հարկային հաշիվ համարվող հաշվարկային փաստաթուղթ, որն էլ հիմք է հանդիսանում գնորդի համար հաշվանցում կատարելու համար, եթե պահպանված են հաշվանցման համար օրենսդրությամբ սահմանված այլ պայմանները:

Հաշվարկային փաստաթուղթը լրացվում է 5 օրինակից յուրաքանչյուր գործարքի համար: Լրացված հաշվարկային փաստաթղթի 2 օրինակները տրվում են գնորդին, իսկ մեկական օրինակները հաշվարկային փաստաթուղթ դուրս գրողի և ստացողի կողմից մինչև գործարքների կատարմանը հաջորդող ամսվա 15-ը ներառյալ ներկայացվում է կազմակերպության հաշվառման վայրի հարկային մարմին՝ հետագա վերահսկողություն իրականացնելու նպատակով:

Հաշվարկային փաստաթղթեր ստացած անձինք, յուրաքանչյուր ամսվա համար՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը պարտավոր են համապատասխան հարկային մարմին ներկայացնել հաշվարկային փաստաթղթերի ստացման և օգտագործման վերաբերյալ հաշվարկ:

Ակցիզային հարկի հաշվարկման և վճարման ժամկետները

ԼՂՀ-ում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների համար ակցիզային հարկի հաշվարկման և վճարման հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր ամիսը: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար մինչև դրան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ վճարում են ակցիզային հարկը և յուրաքանչյուր եռամսյակի համար մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ համապատասխան հարկային մարմին ներկայացնում ակցիզային հարկի հաշվարկ՝ հարկային մարմնի սահմանած ձևով:

Պատասխանատվությունը օրենքը խախտելու համար

Ակցիզային հարկով հարկվող օբյեկտը կամ հարկման բազան թաքցնելու կամ պակաս ցույց տալու համար հարկ վճարողներից գանձվում է թաքցված կամ պակաս ցույց տրված ակցիզային հարկի գումարը, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի 20 %-ի չափով, իսկ հարկային մարմնի կողմից խախտումն արձանագրվելուց հետո մեկ տարվա ընթացքում ակցիզային հարկով հարկվող օբյեկտը կամ հարկման բազան կրկին թաքցնելու կամ պակաս ցույց տալու դեպքում՝ տուգանք՝ այդ գումարի 40 %-ի չափով:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար ակցիզային հարկի ճշգրտված մեկից ավելի յուրաքանչյուր հաշվարկի ներկայացման դեպքում հարկ վճարողներից գանձվում է տուգանք՝ 200.0 հազար դրամի չափով:

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ

Ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ) անուղղակի հարկ է, որը գանձվում է ապրանքների ներմուծման դեպքում, մատակարարի կողմից մատակարարվող ապրանքների և մատուցվող ծառայությունների դիմաց և վերականգնվում է գնորդի կողմից առևտրային շղթայի յուրաքանչյուր փուլում մինչև վերջնական սպառողը:

ԱԱՀ վճարողներ են համարվում ինքնուրույն տնտեսական գործունեություն իրականացնող ֆիզիկական, իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները:

ԱԱՀ-ով հարկվող գործարքներն են.

- ապրանքների մատակարարումը,
- ծառայությունների մատուցումը,
- անհատույց սպառումը,
- ապրանքների ներմուծումը:

ԱԱՀ-ի դրույքաչափը

Սահմանված է ԱԱՀ-ի երկու դրույքաչափ՝

- 20 % (եթե հարկի գումարը ներառված է ապրանքի կամ ծառայության գնի մեջ, ապա ԱԱՀ-ն հաշվարկվում է ապրանքների և ծառայու-

թյունների ամբողջ արժեքի նկատմամբ 16.67 % հաշվարկային դրույքաչափ կիրառելով),

- գրոյական դրույքաչափ (այս դրույքաչափը սովորաբար կիրառվում է ապրանքների կամ ծառայությունների արտահանման դեպքում, այն ապրանքների և ծառայությունների համար, որոնք ձեռք են բերվում ԼՂՀ-ում դիվանագիտական և նրանց հավասարեցված կազմակերպությունների կողմից պաշտոնական օգտագործման համար և այլն):

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ մի շարք գործարքներ (գործառնություններ) ազատվում են ԱԱՀ-ից: Դա նշանակում է, որ այդ ապրանքների վաճառքի կամ ծառայությունների մատուցման գործարքից ԱԱՀ չի հաշվարկվում և գանձվում, իսկ այդ ապրանքների և ծառայությունների ձեռքբերման գնի մեջ եղած ԱԱՀ-ի գումարը չի կարող հաշվանցվել ԱԱՀ-ի հաշվարկներում:

Հաշվարկային փաստաթղթերի լրացման կարգը

ԱԱՀ վճարողները ԱԱՀ-ով հարկվող ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման դեպքում պարտավոր են դուրս գրել հարկային հաշիվներ:

Հարկային հաշիվները պետք է ներառեն հետևյալ հիմնական տվյալները.

- հարկային հաշվի հերթական համարը և ամսաթիվը,
- մատակարարի անվանումը, իրավաբանական հասցեն և հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), ֆիզիկական անձի անունը, ազգանունը (բնակության վայրը),
- գնորդի անվանումը և իրավաբանական հասցեն, ֆիզիկական անձի անունը, ազգանունը (բնակության վայրը),
- ապրանքների անվանումը և քանակը կամ ծառայությունների տեսակը, ծավալը,
- ապրանքների կամ ծառայությունների արժեքը,
- հաշվարկված ԱԱՀ-ի գումարը (առանձին տողով):

ԱԱՀ-ի հաշվարկման կարգը

ԱԱՀ վճարող անձինք հաշվետու ժամանակաշրջանում պետական

բյուջե են վճարում այդ ժամանակաշրջանում իրականացված հարկվող գործարքների (գործառնությունների) հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարը, որից հաշվանցվում (պակասեցվում) են ապրանքների կամ ծառայությունների ձեռքբերման բոլոր գործարքների հարկային հաշիվներում (մաքսային հայտարարագրերում) առանձնացված ԱԱՀ-ն, ընդ որում, համաձայն օրենքի, մատակարարների հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարների հաշվանցման համար անհրաժեշտ է, որպեսզի՝

- ձեռքբերումները կատարված լինեն արտադրական և այլ առևտրային նպատակներով,

- ձեռքբերումների գծով ստացված հարկային հաշիվները լրացվեն «Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքով սահմանված վավերապայմաններին համապատասխան,

- այդ ձեռքբերումների դիմաց վճարումները կատարված լինեն բանկային փոխանցմամբ:

Ձեռք բերված ապրանքների ու ստացված ծառայությունների գծով հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները հաշվանցվում են այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ կատարվել է վճարումը:

Ձեռք բերված ապրանքների ու ստացված ծառայությունների գծով ուշ ստացված հարկային հաշիվներում առանձնացված և հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարները հաշվանցվում են այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ ստացվել է հարկային հաշիվը, բացառությամբ էլեկտրաէներգիայի գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարների, որոնք կարող են հաշվանցվել նաև էլեկտրաէներգիայի ստացման հաշվետու ժամանակաշրջանում:

Արտադրական և այլ առևտրային նպատակներով հանրապետության տարածքում ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների դիմաց բանկի կամ փոստի միջոցով մատակարարի բանկային հաշվին փոխանցումները մասնակիորեն կատարվելու դեպքում ԱԱՀ-ի հաշվանցումները կատարվում են վճարմանը համամասնորեն:

Ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների դիմաց մատակարարին վճարման ենթակա գումարի մի մասը բանկի կամ

փոստի միջոցով փոխանցելու, իսկ մյուս մասը կանխիկ դրամով վճարելու կամ այլ կերպ հատուցելու դեպքերում ԱԱՀ-ի հաշվանցումը սահմանված կարգով կատարվում է միայն բանկի կամ փոստի միջոցով՝ մատակարարի բանկային հաշվին փոխանցումներով վճարումներին վերաբերող մասով:

«Գնումների մասին» ԼԳՀ օրենքին համապատասխան պետական գնումների շրջանակներում ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման գործարքների մասով ԱԱՀ-ի վճարման պարտավորության ծագման պահը որոշվում է ձեռք բերված ու մատակարարված ապրանքների և մատուցված ու ստացված ծառայությունների դիմաց վճարման պահով: Նշված դրույթի կիրառման նպատակով պետական գնումների շրջանակներում ապրանքներ մատակարարող և ծառայություններ մատուցող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը հաշվառման վայրի հարկային մարմին պետք է ներկայացնեն պատվիրատուի կողմից տրամադրված՝ պետական գնումների շրջանակներում մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների համար փաստացի վճարելու պահի վերաբերյալ տեղեկանք:

ԱԱՀ-ի վճարման և հաշվարկների ներկայացման կարգը և ժամկետները

ԼԳՀ տարածքում իրականացված գործարքների համար ԱԱՀ-ն առաջանում է այդ գործարքների կատարման պահին: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի ԱԱՀ-ի հաշվարկները ներկայացվում և վճարումները բյուջե կատարվում են հետևյալ ժամկետներում՝

այն հարկ վճարողների համար, որոնց նախորդ տարվա եկամուտները չեն գերազանցել 60 մլն դրամը, հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր եռամսյակը: Եռամսյակը ավարտվելուց հետո՝ մինչև այդ եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը պետք է ներկայացնել ԱԱՀ-ի հաշվարկները և կատարել վճարումներ բյուջե:

այն հարկ վճարողների համար, որոնց նախորդ տարվա եկամուտները գերազանցել են 60 մլն դրամը, հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր ամիսը: Ամիսը ավարտվելուց հետո՝ մինչև այդ ամսին հաջորդող ամսվա 20-ը պետք է ներկայացնել ԱԱՀ-ի հաշվարկ-

ները և կատարել վճարումներ բյուջե:

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 20.1-ին հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում հայտարարագիր ներկայացրած անհատ ձեռնարկատերերը ընթացիկ կիսամյակի համար ներկայացնում են ԱԱՀ-ի կիսամյակային հաշվարկ (եռամսյակային կտրվածքով) մինչև այդ կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը, իսկ վճարումը կատարում եռամսյակը մեկ մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը:

Պատասխանատվությունը օրենքը խախտելու համար

Հարկային հաշիվների խախտումով լրացման համար վճարողներից գանձվում է տուգանք՝ այդ փաստաթղթերում *հաշվարկված ԱԱՀ-ի գումարի 10 %-ի չափով*:

Հարկային մարմին ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկներով պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարը պակաս ցույց տալու կամ պետական բյուջեից հաշվանցման ենթակա գումարն ավել ցույց տալու համապատասխան դեպքերի համար հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ օրենքին համապատասխան հաշվարկվող՝ պետական բյուջե վճարման ենթակա գումարի *20 %-ի չափով*, մեկ տարվա ընթացքում նույն տեսակի խախտումը կրկին կատարելու դեպքում տուգանք՝ այդ գումարի *40 %-ի չափով*:

Օրենքով սահմանված կարգով հարկային մարմիններին ներկայացվող տեղեկանքում դուրս գրված և ստացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկություններ չներառելու դեպքում սահմանված է տուգանք՝ սխալ ներկայացված կամ չներկայացված յուրաքանչյուր տեղեկության համար *5000 դրամի չափով*, բացառությամբ ճշտված տեղեկությունների ներկայացման դեպքերի:

**ԱՎՏՈՄՈՒԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ,
ՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐՎՈՂ
ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ (ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐ)**

Մասհանումները ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, վերակառուցման, նորոգման և պահպանման համար օրենքով սահմանված կարգով և չափերով իրավաբանական անձանց (այդ թվում՝ իրավաբանական անձանց՝ ԼՂՀ-ում սահմանված կարգով գրանցված ներկայացուցչությունների և մասնաճյուղերի) կողմից պետական բյուջե կատարվող պարտադիր հատկացումներն են:

Մասհանումների տեսակները

Մասհանումների տեսակներն են՝

- ավտոտրանսպորտային միջոցների շահագործմամբ այլ իրավաբանական անձանց և ֆիզիկական անձանց ծառայությունների մատուցումից, հանքարդյունահանման գործունեությունից ստացված հասույթից (առանց ԱԱՀ) կատարվող մասհանումները,
- գործունեության մյուս տեսակների գծով՝ թողարկված արտադրանքի, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների և ապրանքների իրացումից ստացված հասույթից (առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի) կատարվող մասհանումները:

Մասհանումների դրույքաչափերը

Մասհանումները կատարվում են հետևյալ դրույքաչափերով՝

- ավտոտրանսպորտային ծառայությունների մատուցումից ստացած հասույթի (հաշվեգրման եղանակով հաշվարկված) 2 %-ի չափով,
- հանքարդյունահանման գործունեությունից ստացած հասույթի (հաշվեգրման եղանակով հաշվարկված) 0.5 %-ի չափով,
- գործունեության մյուս տեսակների գծով ստացած հասույթի (հաշվեգրման եղանակով հաշվարկված) 0.2 %-ի չափով:

Մասհանումների հաշվարկման և վճարման կարգը

Մասհանումների տարբեր դրույքաչափերով հաշվարկվող գործունեության տեսակներ իրականացնողները մասհանումները վճարում են

գործունեության յուրաքանչյուր տեսակի համար սահմանված առանձին դրույքաչափերով: Այդ նպատակով մասհանումներ կատարողները վարում են առանձնացված հաշվառում՝ ըստ գործունեության առանձին տեսակների:

Մասհանումների հաշվարկման և վճարման հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր եռամսյակը:

Յուրաքանչյուր եռամսյակի համար մասհանումների հաշվարկը հարկային մարմին է ներկայացվում և հաշվարկված մասհանումների գումարը պետական բյուջե է վճարվում մինչև այդ եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը:

Մասհանումների կատարման արտոնությունները

Մասհանումներից ազատվում են.

1) ԼՂՀ պետական կառավարչական հիմնարկները, ԼՂՀ տեղական ինքնակառավարման մարմինները՝ բյուջետային հատկացումների և ամբողջությամբ բյուջե փոխանցվող եկամուտների մասով,

2) ոչ առևտրային կազմակերպությունները՝ անհատույց սպառման մասով,

3) թանկարժեք քարերի մշակումը, այդ թվում՝ հանձնարարության, կոմիսիայի և գործակալության պայմանագրերով,

4) ԼՂՀ կառավարության որոշումների հիման վրա՝

- ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման անհատույց գործարքները,

- մասնակի հատուցմամբ գործարքների իրականացման դեպքում օրենքով սահմանված կարգով որոշվող հաշվարկման օբյեկտի և ստացված հատուցման տարբերությունը:

Օրենքի պահանջները խախտելու համար սահմանված պատասխանատվությունը

Կատարվող մասհանումները սահմանված ժամկետներում բյուջե չվճարվելու դեպքում մասհանումներ կատարողից գանձվում է տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար ժամանակին չմուծված գումարի 0.1 %-ի չափով, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար:

Մասհանումները թաքցնելու կամ պակաս ցույց տալու դեպքում՝

զանձվում են «Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումների (մասհանումների) մասին» ԼՂՀ օրենքին համապատասխան հաշվարկված՝ թաքցված կամ պակաս ցույց տրված մասհանումները, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի 20 %-ի չափով, իսկ խախտումն արձանագրվելուց հետո մեկ տարվա ընթացքում մասհանումները կրկին թաքցնելու կամ պակաս ցույց տալու դեպքում տուգանք՝ մասհանման 40 %-ի չափով:

ԳՈՒՅՔԱՀԱՐԿ, ՀՈՂԻ ՀԱՐԿ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐ

Ընդհանուր հարկման ռեժիմով գործող հարկ վճարողների համար պահպանվում է օրենսդրությամբ սահմանված դեպքերում գույքահարկի, հողի հարկի, ինչպես նաև բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկման և վճարման կարգը:

ԼՂՀ-ում գույքահարկի և հողի հարկի հաշվարկման և վճարման հետ կապված հարաբերությունները, ԼՂՀ-ում գույքահարկ և հողի հարկ վճարողների շրջանակը, հարկվող օբյեկտն ու հարկման բազան, դրույքաչափերը, հաշվարկման և վճարման կարգը, օրենքների խախտման համար պատասխանատվությունները սահմանվում են «Գույքահարկի մասին» և «Հողի հարկի մասին» ԼՂՀ օրենքներով, իսկ բնապահպանական և բնօգտագործման վճարների հասկացությունները, վճարողների շրջանակը, վճարների տեսակները, հաշվարկման և վճարման կարգը, օրենքի խախտման համար պատասխանատվությունները՝ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ԼՂՀ օրենքով:

ՎԱՐՉԱՐԱՐԱԿԱՆ ԱՅԼ ՀԱՐՑԵՐ

ԼՂՀ տարածքում առաքվող կամ տրամադրվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների և վաճառվող արտադրանքի, ապրանքների ու դրանց գների (հասույթի) հաշվառման (գրանցման) գրքերի վարում

ԼՂՀ տարածքում առաքվող կամ տրամադրվող կամ տեղափոխվող արտադրանքի, ապրանքների գրանցման (հաշվառման) և վաճառվող արտադրանքի, ապրանքների և դրանց գների (հասույթի) գրանցման (հաշվառման) կարգերը հաստատված են ԼՂՀ կառավարության 26.12.2000 թ. N 255 որոշմամբ:

Կազմակերպությունները հաշվապահական հաշվառման, իսկ անհատ ձեռնարկատերերը եկամուտների և դրանց հետ կապված ծախսերի հաշվառման գործող կարգին զուգընթաց, շարժական (նյութական) գույք հանդիսացող արտադրանքի (ապրանքների) առաքման կամ տեղափոխման դեպքում պարտավոր են վարել առաքումների գրանցման գիրք:

Առաքումների գրանցման գրքում չի գրանցվում պատրաստի արտադրանք կամ ապրանք չհանդիսացող գույքի ներտնտեսական (նույն հասցեի տարածքում) տեղափոխումը, խողովակաշարերով, էլեկտրահաղորդման, էլեկտրակապի գծերով արտադրանքի առաքումը, տարածման նպատակով մամուլի տեղափոխումը, վերանորոգման և համանման այլ ծառայությունների մատուցման ու աշխատանքների կատարման ժամանակ պահեստամասերի կամ երաշխիքային ժամկետ ունեցող տեխնիկայի տեղափոխումը, տնտեսավարող սուբյեկտների հիմնական միջոցների, արագամաշ առարկաների, բլանկների ու ձևաթղթերի տեղափոխումը:

Առաքումների գրանցման գրքի էջերը համարակալվում, կարվում և կազմվում են, որից հետո տնտեսավարող սուբյեկտն իր հաշվառման վայրի հարկային մարմին է ներկայացնում գրավոր հայտ առաքումների գրանցման գրքի կնքման ու համարակալման համար: Հարկային մարմինը հայտն ստանալուց հետո ոչ ուշ, քան 2 աշխատանքային օրվա ընթացքում կնքում և համարակալում է առաքումների գրանցման գիրքը:

Տրանսպորտային միջոցներով առևտրական գործունեություն իրա-

կանացնող տնտեսավարող սուբյեկտների առաքումների գրանցման գրքերը կնքվում և համարակալվում են սահմանված կարգով՝ հարկային մարմնի ղեկավարի կամ նրա կողմից լիազորված այլ պաշտոնատար անձի գրավոր թույլտվության հիման վրա:

Կնքված և համարակալված գրանցման գրքերը խիստ հաշվառման փաստաթղթեր են և հերթական համարներով հաշվառվում են հարկային մարմնում:

Առաքումների և (կամ) տեղափոխումների իրականացման յուրաքանչյուր հասցեի (կետի, այդ թվում՝ նույն հասցեում, դրա մասին նշում կատարելով առաքումների գրանցման գրքի կազմի վրա) համար (պատրաստի արտադրանքի կամ ապրանքի պահեստ, այլ մատակարարման վայրեր) վարվում է առանձին առաքումների գրանցման գիրք:

Էլեկտրոնային գրանցում (հաշվառում) կարող են իրականացնել (Էլեկտրոնային գիրք կարող են վարել) առաքվող կամ տեղափոխվող ապրանքների, արտադրանքի գրանցման (հաշվառման) գրքեր վարելու պարտավորություն ունեցող այն հարկ վճարողները, որոնք հաշվառմանը վարում են ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից սահմանված չափանիշներին բավարարող համակարգչային ծրագրերով և հաստատված կարգին համապատասխան հաշվառել են Էլեկտրոնային գիրք (գրքեր): Էլեկտրոնային գիրք հաշվառելու լիազորություն ունեցող անձինք և նրանց Էլեկտրոնային թվային ստորագրությունները գրանցվում և հաշվառվում են հարկային մարմնում:

Վաճառվող արտադրանքի, ապրանքների և դրանց զների (հասույթի) գրանցման (հաշվառման) կարգի դրույթները տարածվում են ԼՂՀ տարածքում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող և ձեռնարկատիրական գործունեության առարկաներ (արտադրանք, ապրանք) վաճառող (այդ թվում՝ կոմիսիոն հիմունքներով) կազմակերպությունների, այդ թվում՝ օտարերկրյա կազմակերպությունների կողմից ԼՂՀ-ում ստեղծված՝ առանձնացված ստորաբաժանումների, անհատ ձեռնարկատերերի վրա, որոնք ունեն ապրանքների անմիջական ցուցադրության և վաճառքի վայր:

Կարգի դրույթները չեն տարածվում ոչ նյութական ակտիվների, անշարժ գույքի, ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հրատարակվող թերթերի վաճառքի վրա:

Առևտրի (անմիջական վաճառքի) իրականացման յուրաքանչյուր վայրի (կետի, այդ թվում՝ նույն հասցեում, դրա մասին նշում կատարելով գրանցման գրքի կազմի վրա) համար վարվում է առանձին գրանցման գիրք:

Էլեկտրոնային գրանցում (հաշվառում) կարող են իրականացնել (Էլեկտրոնային գիրք կարող են վարել) վաճառվող արտադրանքի, ապրանքների և դրանց գների (հասույթի) գրանցման (հաշվառման) գրքեր վարելու պարտավորություն ունեցող այն հարկ վճարողները, որոնք հաշվառումը վարում են ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից սահմանած չափանիշներին բավարարող համակարգչային ծրագրերով և հաստատված կարգին համապատասխան հաշվառել են Էլեկտրոնային գիրք (գրքեր): Էլեկտրոնային գիրք հաշվառելու լիազորություն ունեցող անձինք և նրանց Էլեկտրոնային թվային ստորագրությունները գրանցվում և հաշվառվում են հարկային մարմնում:

ՀՍԿԻԶ-ԳՐԱՄԱՐԿՎԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

ԼՂՀ տարածքում հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման, օգտագործման, գրանցման և հաշվառման հետ կապված հարցերը, ինչպես նաև դրանց նկատմամբ հսկողությունը և օրենքի խախտման համար պատասխանատվությունը կարգավորվում է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ԼՂՀ օրենքով:

Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը

ԼՂՀ տարածքում անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս կանխիկ դրամով իրականացվող դրամական հաշվարկների բոլոր դեպքերում (ներառյալ՝ կանխավճարները) հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր է: «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ԼՂՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված են գործունեության այն տեսակները, որոնց դեպքում, գործունեության առանձնահատկություններից ելնելով, հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր է:

րառումը պարտադիր չէ: Այսպես, օրինակ, ՀԳՄ-ների կիրառումը պարտադիր չէ ուսումնական դասընթացների անցկացման ընթացքում հանրակրթական և դրանց հավասարեցված այլ ուսումնական հաստատությունների աշակերտներին և աշխատակիցներին սննդով ապահովման, կրպակներից ոչ ոգելից խմիչքների լցնովի վաճառքի, գյուղական բնակավայրերի մանկաբարձական-բուժական կետերում գտնվող դեղատներից դեղանյութերի վաճառքի և մի շարք այլ գործունեությունների համար:

Պատասխանատվությունը հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման և հսկիչ-դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների կանոնները չպահպանելու համար

Խախտման տեսակ	Տուգանք (հազ. դրամ)	Գործունեության կասեցում կամ լրացուցիչ տուգանք
Հարկային մարմնում չգրանցված (չֆիսկալավորված) ՀԳՄ-ի կիրառում կամ ՀԳՄ-ի բացակայությունը գործունեության իրականացման վայրում (առաջին անգամ)	150.0	-
Հարկային մարմնում չգրանցված (չֆիսկալավորված) ՀԳՄ-ի կիրառում կամ ՀԳՄ-ի բացակայությունը գործունեության իրականացման վայրում (մեկ տարվա ընթացքում կրկնելու դեպքում)	300.0	Այդ մասով գործունեության կասեցում՝ մինչև ՀԳՄ տեղադրելը
Շահագործման կանոնների խախտմամբ՝ հարկային մարմնում գրանցված (ֆիսկալավորված) ՀԳՄ-ի կիրառում (առաջին անգամ)	75.0	-
Շահագործման կանոնների խախտմամբ՝ հարկային մարմնում գրանցված (ֆիսկալավորված) ՀԳՄ-ի կիրառում (մեկ տարվա ընթացքում երկրորդ անգամ)	150.0	Կասեցվում է 5 օրով կամ տուգանվում լրացուցիչ հարյուր հիսուն հազար դրամի չափով
Շահագործման կանոնների խախտմամբ՝ հարկային մարմնում գրանցված (ֆիսկալավորված) ՀԳՄ-ի կիրառում (մեկ տարվա ընթացքում երրորդ անգամ)	300.0	Կասեցվում է 10 օրով կամ տուգանվում լրացուցիչ երեք հարյուր հազար դրամի չափով
Շահագործման կանոնների խախտմամբ՝ հարկային մարմնում գրանցված (ֆիսկալավորված) ՀԳՄ-ի կիրառում (մեկ տարվա ընթացքում չորրորդ և ավելի անգամ)	300.0	Կասեցվում է 10 օրով

Լրացուցիչ տուգանք կիրառվում է, եթե հարկ վճարողը երկու աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է լրացուցիչ տուգանքի վճարման վերաբերյալ գրավոր հայտարարություն:

Հիվանդանոցների և ամբուլատոր բուժօգնության կողմից բուժօգնության և բուժապասարկման ծառայությունների մատուցումը ենթակա չէ կասեցման:

Վերոնշյալ տուգանքները հարկային մարմնի կողմից խախտման փաստն արձանագրելուց, իսկ լրացուցիչ տուգանքը՝ տուգանքի նշանակման օրվանից հետո երկամսյա ժամկետում չմուծելու դեպքում՝ կրկնապատկվում են:

ԴՐԱՄԱԲԿՎԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼՂՀ տարածքում ՀՀ արժույթով և արտարժույթով դրամարկղային գործառնությունների իրականացման, ինչպես նաև կանխիկ դրամի պահպանման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Դրամարկղային գործառնությունների մասին» ԼՂՀ օրենքով:

Օրենքի գործողության ոլորտը

Օրենքը տարածվում է ԼՂՀ տարածքում գործող իրավաբանական անձանց, պետական և այլ հիմնարկների, դրանց ԼՂՀ տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումների (մասնաճյուղերի, ներկայացուցչությունների), օտարերկրյա կազմակերպությունների՝ ԼՂՀ տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումների (մասնաճյուղերի, ներկայացուցչությունների) վրա: Օրենքը տարածվում է նաև այն անհատ ձեռնարկատերերի վրա՝

1) որոնք օրացուցային տարվա որևէ պահին «ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ԼՂՀ են ներմուծել ապրանքներ, կամ՝

2) որոնք իրականացնում են լիցենզավորման ենթակա գործունեություն կամ ունեն լիցենզիա, որի համար պետական տուրքի տարեկան գումարը սահմանված է 50.0 հազար դրամ կամ ավելի, կամ՝

3) որոնց օրացուցային տարվա որևէ պահին ապրանքների մատա-

կարարումից, ծառայությունների մատուցումից (բացառությամբ գույքի վարձակալության, անհատույց օգտագործման, ոչ նյութական ակտիվների օտարման և տոկոսների ստացման) հաշվարկված եկամուտների գումարը գերազանցում է 36 մլն դրամը:

Օրենքի գործողությունը սկսվում է տարածվել անհատ ձեռնարկատերերի վրա վերը նշված փաստերից որևէ մեկը տեղի ունենալու ամսվան հաջորդող ամսվա 1-ից մինչև անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցումը:

Օրենքը չի տարածվում բանկերի և դրանց առանձնացված ստորաբաժանումների (մասնաճյուղերի, ներկայացուցչությունների), այդ թվում՝ օտարերկրյա բանկերի առանձնացված ստորաբաժանումների (մասնաճյուղերի, ներկայացուցչությունների), արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ իրականացնող անձանց, վարկային կազմակերպությունների վրա:

Դրամարկղային գործառնությունների իրականացումը

Դրամարկղային գործառնություններն իրականացվում են դրամարկղի և (կամ) հաշվետու անձանց միջոցով:

Դրամարկղային գործառնությունների իրականացման, այդ թվում՝ դրանց փաստաթղթավորման և դրամարկղային գրքի վարման կարգը սահմանվում է ԼՂՀ կառավարության 29.11.2004թ. N 477 որոշմամբ:

Կանխիկ դրամով վճարումների նկատմամբ սահմանափակումները

Կանխիկ դրամով վճարումների նկատմամբ սահմանվում են հետևյալ սահմանափակումները՝

ա) ապրանքների, ծառայությունների, աշխատանքների *միանվագ* գնման և (կամ) վճարումների ընդունման առավելագույն չափը՝ 300.0 հազար դրամ,

բ) *մեկ ամսվա ընթացքում* ապրանքների, ծառայությունների, աշխատանքների գնումների դիմաց կանխիկ դրամով վճարման և (կամ) վճարումների ընդունման առավելագույն չափը՝ 3 մլն դրամ:

Կանխիկ դրամով վճարումների նկատմամբ սահմանափակումները չեն տարածվում աշխատավարձի, դրան հավասարեցված վճարումների, նպաստների, կրթաթոշակների, կենսաթոշակների և այլ համանման

վճարումների, գործուղման և դաշտային բավարարման նպատակով կատարվող վճարումների, ներկայացուցչական ծախսերի դիմաց կատարվող վճարումների, ֆիզիկական անձանց հետ կնքված գրավոր քաղաքացիաիրավական պայմանագրերի համաձայն կազմակերպությանը մատուցված ծառայությունների և կազմակերպության համար կատարված աշխատանքների դիմաց կատարվող վճարումների, ֆիզիկական անձանց կատարվող՝ նրանց ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ կապ չունեցող վճարումների, գյուղատնտեսական մթերքներ մթերող կազմակերպությունների կողմից գյուղացիական տնտեսություն վարող քաղաքացիների հետ կնքված գրավոր պայմանագրերի հիման վրա նրանցից գնված գյուղատնտեսական մթերքների դիմաց վճարումների, կառավարության կողմից սահմանված չափաքանակներով պետական հատուկ նշանակության ապրանքների, ծառայությունների և աշխատանքների դիմաց վճարումների, ինչպես նաև կառավարության սահմանած դեպքերում անհետսձգելի վճարումներ կատարելու անհրաժեշտության առկայության դեպքում վճարումների կատարման և (կամ) ընդունման վրա:

Դրամարկդային գործառնությունների մասին օրենսդրության պահանջների խախտման համար պատասխանատվությունը

Կանխիկ դրամով վճարումների կատարման և (կամ) ընդունման նկատմամբ «Դրամարկդային գործառնությունների մասին» ԼԳՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները չպահպանելու դեպքում գանձվում է տուգանք՝ կանխիկ դրամով վճարումների կատարման և (կամ) ընդունման թույլատրված չափը գերազանցող գումարների (խախտման գումար) հանրագումարի 5 %-ի չափով, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը և ոչ ավելի, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հարաբերակցությունը: Սահմանափակումների չպահպանելն արձանագրելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, դրանք կրկին չպահպանելու դեպքում գանձվում է տուգանք՝ խախտման գումարների հանրագումարի 10 %-ի չափով, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկը և ոչ ավելի, քան սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարապատիկը:

Դրամարկղային գործառնությունները դրամարկղային գրքում չգրանցելու դեպքում գանձվում է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով, իսկ դրամարկղային գործառնությունները դրամարկղային գրքում չգրանցելն արձանագրելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, դրանք կրկին չգրանցելու դեպքում՝ տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Դրամարկղային գրքի վարման օրենսդրությամբ սահմանված կանոնները խախտելու դեպքում գանձվում է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով, իսկ դրամարկղային գրքի վարման օրենսդրությամբ սահմանված կանոնների խախտումն արձանագրելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, դրանք կրկին խախտելու դեպքում տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՐՈՇՄԱՎՈՐՈՒՄ

ԼՂՀ տարածքում արտադրված կամ ԼՂՀ տարածք ներմուծված՝ շալցված, փաթեթավորված կամ ցանկացած այլ ձևով տարալավորված՝ «Առևտրի և ծառայությունների մասին» ԼՂՀ օրենքի 9.2-րդ հոդվածում ներկայացված աղյուսակում ներառված ապրանքների վրա օտարման ցանկացած փուլում դրոշմապիտակի առկայությունը պարտադիր է, եթե օրենքով սահմանված՝ համապատասխան ծածկագրով ապրանքային դիրքում ընդգրկվող ապրանքներն արտադրողի կամ այլ փաթեթավորողի կողմից փաթեթավորված (չափածրարված), շալցված կամ այլ կերպ տարալավորված են նույն փաթեթավորմամբ ու ապրանքային տեսքով, առանց քաշը (ծավալը) փոփոխելու, մանրածախ առևտրի ոլորտում իրացման համար: Գրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա ապրանքներ են, օրինակ, կաթնեղենը, պահածոները, հյութերը, օձանելիքը և այլն:

ԼՂՀ տարածքում պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող անձինք դրոշմապիտակները ձեռք են բերում իրենց հաշվառման վայրի հարկային մարմնից՝ մինչև այդ ապրանքների օտարումը: Գրոշմապիտակները տրամադրվում են միայն դրոշմապի-

տակների ձեռքբերման ամբողջ արժեքը նախապես պետական բյուջե վճարելու դեպքում: ԼՂՀ կառավարության 28.12.2013թ. N 982-Ն որոշմամբ՝ ԼՂՀ տարածքում արտադրվող պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների դրոշմապիտակի հազար հատի արժեքը սահմանվել է 3 528 ՀՀ դրամ:

Օգտագործված դրոշմապիտակների ձեռքբերման համար արտադրողի կողմից վճարված գումարը (բացառությամբ այն դրոշմապիտակների ձեռքբերման համար վճարված գումարների, որոնք չեն օգտագործվել և չեն վերադարձվել) սահմանված ձևով դիմումի հիման վրա հաշվանցվում է հարկային պարտավորությունների դիմաց:

ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍՊՐՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՍՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՄԵՉՈՑՆԵՐ

Հարկային օրենսդրության խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ ԼՂՀ օրենքներով սահմանված կարգով:

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 23-րդ հոդվածի համաչափ՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից մինչև 90 օր (ներառյալ) ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը (հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ հարկային գործակալը) վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.075 %-ի չափով:

Հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու 91-րդ օրվանից սկսած ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը (հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ հարկային գործակալը) վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.1 %-ի չափով:

Վերոհիշյալ տույժը կիրառվում է ժամանակին չմուծված հարկի գումարների (այդ թվում նաև՝ հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ հարկային գործակալի կողմից չվճարված), հարկերի կանխավճարային մուծումների գումարների, ստուգման արդյունքներով հայտնաբերված (պակաս ցույց տրված) հարկվող օբյեկտի գծով հարկի գումարի նկատմամբ՝ դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար:

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն՝ հարկ վճարողների (հարկային գործակալների) կողմից հարկային մարմիններ կայացվող հաշվարկը (հայտարարագիրը, հաշվետվությունը) հարկային օրենսդրությամբ սահմանված ժամկետից երկու ամսից ավելի ուշ ներկայացվելու կամ չներկայացվելու դեպքում այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր տասնհինգ լրացված օրվա համար հարկ վճարողից (հարկային գործակալից) գանձվում է տուգանք (նաև ստուգման ակտով)՝ հաշվարկված հարկի ընդհանուր գումարի 5 %-ի չափով: Նշված տուգանքների հանրագումարը չպետք է գերազանցի այդ հարկի հաշվարկված ընդհանուր գումարը, իսկ տասնհինգ օրվա ժամկետը հաշվարկելիս ոչ աշխատանքային օրերը հաշվի են առնվում միայն առաջին տուգանքի հաշվարկման ժամանակ:

Տուգանքի հաշվարկումը դադարում է տվյալ հարկի հաշվարկը (հայտարարագիրը) հարկային մարմիններ կայացնելու պահից կամ տվյալ հարկատեսակի գծով պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգումը ներառող ստուգման ավարտից:

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 25-րդ հոդվածի համաձայն՝ հաշվապահական հաշվառում (հարկային օրենսդրությամբ և ԼՂՀ կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում՝ նաև այլ հաշվառում և (կամ) գրանցումներ) չվարելու համար վճարողից (հարկային գործակալից) գանձվում է տուգանք՝ այդ խախտումների հետևանքով պակաս հաշվարկված հարկերի գումարի 10 %-ի չափով:

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 25.1-ին հոդվածի համաձայն՝ օրենքով սահմանված կարգով իրականացված ստուգումների արդյունքներով ԼՂՀ կառավարության սահմանած կարգով պատրաստի արտադրանքի, ապրանքների մատակարարման կամ պահպանման վայրերում պատրաստի արտադրանքի, ապրանքների մնացորդի պակասորդ հայտնաբերվելու դեպքում գանձվում է տուգանք՝ պակասորդի գնի (արժեքի) 10 %-ի չափով: Նշված խախտումն արձանագրելուց հետո մեկ տարվա ընթացքում խախտումը կրկնվելու դեպքում գանձվում է տուգանք՝ պակասորդի գնի (արժեքի) 15 %-ի չափով:

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ օրենքով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեությունն առանց լիցենզիայի իրականացնելու կամ առանց թույլտվության կամ առանց

լիցենզիայի ընդերքը կամ բնական պաշարներն օգտագործելու դեպքերում կազմակերպություններից և անհատ ձեռնարկատերերից գանձվում է տուգանք՝ լիցենզիայի կամ թույլտվության տրման համար օրենքով սահմանված *պետական տուրքի դրույքաչափի հնգապատիկի չափով, բայց ոչ պակաս 500.0 հազար դրամից*: Խախտումն արձանագրելուց հետո մեկ տարվա ընթացքում խախտումը (անկախ լիցենզավորման կամ թույլտվության ենթակա գործունեության տեսակից) կրկնելու դեպքում կազմակերպություններից և անհատ ձեռնարկատերերից գանձվում է տուգանք՝ լիցենզավորման կամ թույլտվության ենթակա գործունեության իրականացման լիցենզիայի կամ թույլտվության տրման համար օրենքով սահմանված *պետական տուրքի դրույքաչափի տասնապատիկի չափով, բայց ոչ պակաս 1 մլն դրամից*:

Նշված խախտումներ հայտնաբերելու դեպքերում խախտումներ կատարած անձանցից գանձվում է նաև լիցենզավորման համար օրենքով սահմանված պետական տուրքի գումարի չափով վնասի հատուցում:

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն՝ հարկվող օբյեկտը թաքցնելու կամ այն պակաս ցույց տալու դեպքում հարկ վճարողներից (հարկային գործակալներից) օրենքով սահմանված կարգով գանձվում է թաքցված կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի համար նախատեսված (հարկային մարմնի կողմից հաշվարկված) հարկի գումարը, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի 20 %-ի չափով, իսկ հարկային մարմնի կողմից խախտումն արձանագրվելուց հետո մեկ տարվա ընթացքում նույն հարկատեսակի գծով հարկվող օբյեկտը կրկին թաքցնելու կամ պակաս ցույց տալու դեպքում՝ տուգանք՝ այդ գումարի 40 %-ի չափով, եթե հարկային օրենսդրությամբ այլ բան չի սահմանված:

Հարկվող օբյեկտը թաքցնելը կամ պակաս ցույց տալը հարկային մարմնին ներկայացված տվյալ հարկատեսակի հաշվարկներում (հայտարարագրերում) հարկվող օբյեկտը ցույց չտալը, պակաս ցույց տալը, կամ էլ գործունեություն չիրականացնելու (հարկվող օբյեկտներ չառաջանալու) մասին կեղծ տվյալներ ներկայացնելն է:

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեության առարկաները չգրանցելու, այ-

սինքն՝ առաքվող, տրամադրվող, տեղափոխվող կամ վաճառվող արտադրանքը, ապրանքները, ինչպես նաև կատարվող աշխատանքները և մատուցվող ծառայությունները ԼՂՀ կառավարության կողմից սահմանված կարգով չգրանցելու դեպքում հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ ձեռնարկատիրական գործունեության չգրանցված առարկաների վաճառքի (իրացման) գներով արտահայտված (հաշվարկված) ամբողջ արժեքի 10 %-ի չափով: Հարկ վճարողը տուգանքը մուծում է հարկային մարմնի կողմից խախտման փաստն արձանագրվելուց հետո՝ երեսնօրյա ժամկետում: Նշված ժամկետում տուգանքը չմուծելու դեպքում այն կրկնապատկվում է:

Հարկային մարմնի կողմից խախտումն արձանագրվելուց հետո մեկ տարվա ընթացքում, ձեռնարկատիրական գործունեության առարկաները չգրանցելու կրկնական փաստ արձանագրելու դեպքում գանձվում է՝ տուգանք՝ ձեռնարկատիրական գործունեության չգրանցված առարկաների վաճառքի (իրացման) գներով արտահայտված (հաշվարկված) ամբողջ արժեքի 15 %-ի չափով: Հարկ վճարողը տուգանքը մուծում է հարկային մարմնի կողմից կրկնական խախտման փաստն արձանագրվելուց հետո՝ երեսնօրյա ժամկետում: Նշված ժամկետում տուգանքը չմուծելու դեպքում այն կրկնապատկվում է:

Ձեռնարկատիրական գործունեության առարկաները ԼՂՀ կառավարության կողմից սահմանված կարգով գրանցված գներից թանկ վաճառելիս (իրացնելիս) հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ տարբերության գումարի 10 %-ի չափով, այդ թվում՝ չվաճառված (չիրացված) ձեռնարկատիրական գործունեության առարկաների մնացորդների համար: Հարկ վճարողը տուգանքը մուծում է հարկային մարմնի կողմից խախտման փաստն արձանագրվելուց հետո՝ երեսնօրյա ժամկետում: Նշված ժամկետում տուգանքը չմուծելու դեպքում այն կրկնապատկվում է:

Հարկային մարմնի կողմից խախտումն արձանագրվելուց հետո մեկ տարվա ընթացքում, ձեռնարկատիրական գործունեության առարկաները ԼՂՀ կառավարության կողմից սահմանված կարգով գրանցված գներից թանկ վաճառելու (իրացնելու) կրկնական փաստ արձանագրելու դեպքում գանձվում է տուգանք՝ տարբերության գումարի 15 %-ի չափով, այդ թվում՝ չվաճառված (չիրացված) ձեռնարկատիրական գոր-

ծունեության առարկաների մնացորդների համար: Հարկ վճարողը տուգանքը մուծում է հարկային մարմնի կողմից կրկնական խախտման փաստն արձանագրվելուց հետո՝ երեսուրյա ժամկետում: Նշված ժամկետում տուգանքը չմուծելու դեպքում այն կրկնապատկվում է:

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված տուգանքները չեն կիրառվում, եթե խախտումները կատարվել են այն հաշվետու ժամանակաշրջանում, որի համար սահմանված կարգով հարկ վճարողի կողմից ներկայացված են հաշվապահական հաշվետվություններ (հայտարարագրեր) կամ իրացման շրջանառությունից (համախառն եկամտից) բխող հարկային պարտավորություններն արտացոլող՝ հարկային օրենսդրությամբ կամ հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթեր:

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 28²-րդ հոդվածի համաձայն՝ ԼՂՀ օրենսդրությամբ նախատեսված դրոշմավորման ենթակա չդրոշմավորված, ինչպես նաև ապօրինի ձեռք բերված դրոշմանիշներով (դրոշմապիտակներով) դրոշմավորված ապրանքների և «Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված ապօրինի գործունեության ընթացքում ԼՂՀ կառավարության կողմից սահմանված ցանկում ընդգրկված ապրանքների իրացման դեպքերում այդ ապրանքները ենթակա են այդ ապրանքային տեսքով շրջանառությունից դուրսբերման հարկային մարմինների կողմից՝ ԼՂՀ կառավարության սահմանած կարգով:

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 28³-րդ հոդվածի համաձայն՝ արտարժույթի առքուվաճառքի, արտարժույթի դիլերային-բրոքերային առքուվաճառքի գործունեություն իրականացնողների կողմից արտարժույթի առքուվաճառքի գործառնությունները ՀՀ կենտրոնական բանկի սահմանած կարգով չգրանցելու դեպքում՝ հարկ վճարողներից գանձվում է տուգանք՝ չգրանցված գործառնությամբ փոխանակված արժույթի դրամով արտահայտված ընդհանուր գումարի 25 %-ի չափով: Հարկ վճարողը տուգանքը մուծում է հարկային մարմինների կողմից խախտման փաստն արձանագրելուց հետո՝ երեսուրյա ժամկետում: Նշված ժամկետում տուգանքը չմուծելու դեպքում այն կրկնապատկվում է:

Հարկային մարմինների կողմից խախտումն արձանագրվելուց հե-

տո՝ մեկ տարվա ընթացքում, արտարժույթի առքուվաճառքի գործառնությունները չգրանցելու կրկնական փաստ արձանագրելու դեպքում գանձվում է տուգանք՝ չգրանցված գործառնությամբ փոխանակված արժույթի դրամով արտահայտված ընդհանուր գումարի 50 %-ի չափով: Հարկ վճարողը տուգանքը մուծում է հարկային մարմինների կողմից կրկնական խախտման փաստն արձանագրվելուց հետո՝ երեսուրյա ժամկետում: Նշված ժամկետում տուգանքը չմուծելու դեպքում այն կրկնապատկվում է:

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 28⁴-րդ հոդվածի համաձայն՝ ԼՂՀ տարածքում ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման գործարքների համար երկկողմանի հաշվարկային փաստաթուղթ ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դուրս չգրելու դեպքում (այդ թվում՝ գնորդի պահանջով) ապրանքներ մատակարարող, ծառայություններ մատուցող, աշխատանքներ կատարող կազմակերպություններից և անհատ ձեռնարկատերերից, ինչպես նաև այդպիսի ապրանքներ, ծառայություններ և աշխատանքներ ձեռք բերած կազմակերպություններից և անհատ ձեռնարկատերերից (բացառությամբ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվող վարձու աշխատանքի դեպքերի) գանձվում է տուգանք՝ այդ գործարքների լրիվ արժեքով հատուցման գումարի 20 %-ի չափով: Հոդվածով սահմանված են տուգանքի չկիրառման դեպքերը:

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 28⁵-րդ հոդվածի համաձայն՝ գործունեության իրականացման յուրաքանչյուր հասցեում հարկային մարմնի սահմանած ձևի հայտարարություն չփակցնելու դեպքում առևտրային կազմակերպություններից և անհատ ձեռնարկատերերից գանձվում է 50.0 հազար դրամի չափով տուգանք՝ յուրաքանչյուր հասցեում չփակցրած տեղեկության մասով, իսկ խախտումն արձանագրելուն հաջորդող մեկ տարվա ընթացքում նշված տեղեկությունները չփակցնելու կրկնական փաստ արձանագրվելու դեպքում գանձվում է տուգանք՝ յուրաքանչյուր չփակցրած տեղեկության մասով 100.0 հազար դրամի չափով:

Անհատ ձեռնարկատերերը «Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 20¹-ին հոդվածով սահմանված հայտարարագրի մեջ ոչ ճիշտ տեղեկություններ ներառելու դեպքում վճարում են տուգանք՝ 50.0 հազար դրամի չափով:

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝ անապրանք փաստաթղթեր դուրս գրած և ձեռք բերած անձանց նկատմամբ կիրառվում է տուգանք՝ գործարքի (մատակարարված ապրանքի, մատուցված ծառայության կամ կատարված աշխատանքի) փաստացի կատարումը հավաստող՝ կազմված փաստաթղթում նշված էական պայմանների (այդ թվում՝ դրանցից որևէ մեկի) 20 և ավելի տոկոս շեղման դեպքում՝ շեղման (դրամական արտահայտությամբ) 100 %-ի չափով, քայց ոչ պակաս 1 մլն դրամից:

Նշված խախտումը մեկ տարվա ընթացքում կրկնվելու դեպքում կիրառվում է տուգանք՝ շեղման կրկնապատիկի չափով, քայց ոչ պակաս 1 մլն դրամից:

Հարկային օրենսդրության կիրառման առումով *անապրանք փաստաթուղթը*՝ հարկերի հաշվարկման և (կամ) վճարման համար հիմք հանդիսացած (հարկային հաշվառման մեջ ներառված)՝ ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին ձևակերպորեն համապատասխանող վճարահաշվարկային այն փաստաթուղթն է, որում նշված գործարքը (ապրանքի մատակարարում, ծառայության մատուցում կամ աշխատանքի կատարում) այդ փաստաթուղթը կազմած կողմերի միջև փաստացի չի կատարվել կամ կատարվել է այդ փաստաթղթում նշված պայմաններից էականորեն տարբերվող պայմաններով: Էականորեն տարբերվող պայմաններ են համարվում կատարված գործարքի (մատակարարված ապրանքի, մատուցված ծառայության կամ կատարված աշխատանքի) տեսականին, գինը, քանակը, գումարը:

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարկ վճարողն իրավունք ունի՝

- ա. ծանոթանալ իր գործունեության ստուգումների ակտերին,
- բ. հարկային մարմիններ ներկայացնել բացատրություններ հարկերի հաշվարկման ու վճարման և ստուգումների արդյունքների վերաբերյալ,
- գ. օրենքով սահմանված կարգով գանգատարկել հարկային մարմինների պաշտոնատար անձանց գործողությունները,

դ. առանձին հարկատեսակի մասին օրենքով նախատեսված դեպքերում սահմանված կարգով դիմել հարկային արտոնություն ստանալու համար,

ե. սահմանված կարգով դիմել հարկային մարմին՝ պարզաբանում ստանալու համար:

Հարկ վճարողը պարտավոր է՝

ա. ԼՂՀ կառավարության կողմից սահմանված կարգով իրականացնել հաշվապահական հաշվառում (հարկային օրենսդրությամբ կամ ԼՂՀ կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում՝ նաև այլ հաշվառում և (կամ) գրանցումներ), կազմել հաշվետվություններ՝ իր ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ,

բ. հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով հարկային օրենսդրությամբ այլ բան սահմանված չլինելու դեպքում, ինքնուրույն հաշվարկել սահմանված հարկերի գումարները և իրականացնել դրանց վճարումը բյուջե,

գ. սահմանված ժամկետներում հարկային մարմիններին ներկայացնել (մասնավորապես ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կամ ուղարկել փոստով, կամ հանձնել ըստ պատկանելության) հարկային օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները, հաշվարկները, այլ փաստաթղթեր և տեղեկություններ,

դ. ժամանակին վճարել օրենքով սահմանված հարկերը՝ հարկային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում սահմանված կարգով կատարելով նաև դրանց կանխավճարային մուծումները,

ե. անհրաժեշտ պայմաններ ապահովել հարկային մարմինների կողմից իրականացվող ստուգումների (ուսումնասիրությունների) համար,

զ. ներկայացնել հարկային արտոնությունների՝ իր իրավունքը հաստատող փաստաթղթերը,

է. հարկային մարմինների ստուգումների (ուսումնասիրությունների) հետևանքով բացահայտված, թաքցված կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի գումարի չափով ուղղումներ (ճշգրտումներ) կատարել հաշվապահական հաշվառման (հարկային օրենսդրությամբ կամ ԼՂՀ կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում՝ նաև

այլ հաշվառմանը և (կամ) գրանցումներին վերաբերող) փաստաթղթերում,

ը. հարկային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի՝ ոչ ռուսերեն և անգլերեն լեզվով լրացված (կազմված) օրինակներին կից ապահովել դրանց հայերեն թարգմանված տարբերակները,

թ. իր գործունեության իրականացման յուրաքանչյուր հասցեում առավել տեսանելի տեղում (իսկ գտնվելու և (կամ) կառավարման որոշումների ընդունման, օպերատիվ ֆինանսական դեկավարման վայրերում՝ համապատասխան ցուցանակների վրա) փակցնել հարկային մարմնի սահմանած ձևի հայտարարություն՝ նշելով հարկ վճարողի լրիվ անվանումը (անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ ֆիզիկական անձի անունը, հայրանունը, ազգանունը), հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության տվյալ վայրի հասցեն և տվյալ հասցեում իրականացվող գործունեության տեսակը (տեսակները):

Անհատ ձեռնարկատերերի կողմից հաշվարկ-հաշվետվությունների և այլ տեղեկությունների կիսամյակային ներկայացումը

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 20¹-ին հոդվածի համաձայն՝ տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ վարձու աշխատող չունեցող, լիցենզավորման ենթակա գործունեություն չիրականացնող և լիցենզիա չունեցող այն անհատ ձեռնարկատերերը, որոնց նախորդ տարվա ընթացքում մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների իրացման շրջանառության ընդհանուր գումարը չի գերազանցել 36 մլն դրամը, յուրաքանչյուր տարվա մինչև հունվարի 20-ը ներառյալ իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում հարկային մարմնի սահմանած ձևով հայտարարագիր՝ հարկային օրենսդրությամբ նախատեսված հաշվարկ-հաշվետվությունները և այլ տեղեկությունները կիսամյակային ներկայացնելու համար: Անկախ սույն մասում նշվածից՝ «Հաստատագրված վճարների մասին» ԼՂՀ օրենքով սահմանված հայտարարությունները ներկայացվում են այդ օրենքով սահմանված ժամկետներում:

Նոր ստեղծված (հաշվառված) և (կամ) վկայականը հարկային մարմին հանձնած անհատ ձեռնարկատերերը, հայտարարագիրը հաշ-

վառման վայրի հարկային մարմին են ներկայացնում հաշվառման և (կամ) վկայականի հետ ստացման օրվանից մեկամսյա ժամկետում:

Հայտարարագրվող ժամանակահատվածում վարձու աշխատող ունենալու և (կամ) լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու և (կամ) լիցենզիա ունենալու դեպքում անհատ ձեռնարկատերերը փաստը տեղի ունենալու կիսամյակին հաջորդող ամսվա 1-ից մինչև տվյալ տարվա վերջը հաշվարկ-հաշվետվությունները և այլ տեղեկությունները ներկայացնում են այդ հարկատեսակների մասին օրենքներով սահմանված ընդհանուր կարգով, բացառությամբ «Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքով սահմանված՝ վարձու աշխատողի և պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի անհատական տվյալների գրանցման հայտի և եկամտային հարկի հաշվարկի, որոնք ներկայացվում են փաստը տեղի ունենալու ամսվանից սկսած՝ այդ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հարկային մարմին հաշվետվությունների ներկայացման ժամկետներին կարելի է ծանոթանալ հարկային մարմնի պաշտոնական կայքում՝ www.tax.nk.am՝ «Հարկային օրացույց» բաժնում:

Հարկային մարմնի պաշտոնական կայքից կարող եք ներբեռնել **հարկային հաշվարկների և հայտարարագրերի ձևերը:**

Ընդհանուր հարկման ռեժիմի, ինչպես նաև հարկային օրենսդրության և վարչարարության այլ հարցերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել հարկային մարմնի www.tax.nk.am պաշտոնական կայքէջ, կամ դիմել ԼՂՀ ֆինանսների նախարարության հաշվառման վայրի հարկային մարմին՝

Սյրեփանակերտ քաղաքի հարկային տեսչություն՝

ք. Ստեփանակերտ, Տիգրան Մեծի 16, հեռ. (047) 95-13-97

Ասկերանի շրջանի հարկային տեսչություն՝

ք. Ասկերան, Ն.Ստեփանյան 16, հեռ. (047) 67-70-17

Մարտակերտի շրջանի հարկային տեսչություն՝

ք. Մարտակերտ, Ազատամարտիկների 107, հեռ. (047) 42-18-68

Մարտունու շրջանի հարկային տեսչություն՝

ք. Մարտունի, Փետրվարի 12/27, հեռ. (047) 82-13-77

Հաղորթի շրջանի հարկային տեսչություն՝

ք. Հաղորթ, Շահումյան 1, հեռ. (047) 55-14-47

Շուշիի շրջանի հարկային տեսչություն՝

ք. Շուշի, Ն.Գուման 2, հեռ. (047) 73-19-98

Քաշաթաղի շրջանի հարկային տեսչություն՝

ք. Բերձոր, Երևանյան մայրուղի 3/2, հեռ. (047) 75-22-58

Շահումյանի շրջանի հարկ վճարողների բաժին՝

ք. Քարվաճառ, Վարչակազմի շենք, հեռ. (097) 28-77-99

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ավելացված արժեքի հարկ իրավաբանական անձանցից		
1	915005010218	ԼՂՀ-ում արտադրվող ապրանքների մատակարարման գործարքներից ԱԱՀ
2	915005010318	ԼՂՀ-ում ծառայությունների մատուցման գործարքներից ԱԱՀ
Ավելացված արժեքի հարկ ֆիզիկական անձանցից		
1	915005020218	ԼՂՀ-ում արտադրվող ապրանքների մատակարարման գործարքներից ԱԱՀ
2	915005020317	ԼՂՀ-ում ծառայությունների մատուցման գործարքներից ԱԱՀ
Ակցիզային հարկ ԼՂՀ-ում արտադրվող ապրանքներից		
1	915005030118	Արտադրվող այլ ակցիզային ապրանքներ
2	915005031611	Արտադրվող խաղողի և այլ գինիներ
3	915005031710	Արտադրվող փրփրուն գինիներ, գինեկոնյակ
4	915005031819	Արտադրվող վերմուտ և խաղողի այլ գինիներ, որոնք պարունակում են բուսական և արոմատիկ էքստրակտներ
5	915005031918	Արտադրվող խմորման ենթարկվող այլ ըմպելիքներ (խմորի սիդր, պերրու (տանձի սիդր), մեդրալմպելիք)
6	915005032114	Արտադրվող սպիրտային խմիչքներ
7	915005032213	Արտադրվող խաղողի գինու թորումից ստացվող թրմեր,կոնյակ
8	915005032312	Արտադրվող օղի
9	915005032411	Արտադրվող լիկյորներ, մրգօղիներ

10	91 5005032817	Արտադրվող շանկայն
Շահութահարկ		
1	91 5005050215	Շահութահարկ ոչ պետական կազմակերպություններից (բացի օտարերկրյա ներդրումներով և ֆինանսավարկային կազմակերպություններից)
2	91 5005050314	Շահութահարկ օտարերկրյա ներդրումներով կազմակերպություններից
3	91 5005050512	Շահութահարկ այլ կազմակերպություններից
4	91 5005050611	Շահութահարկ ոչ ռեզիդենտից՝ արբյուրի մոտ չհարկվող
5	91 5005050710	Շահութահարկ ոչ ռեզիդենտից՝ արբյուրի մոտ հարկվող
Եկամտային հարկ աշխատավարձից և դրան հավասարեցված այլ եկամուտներից		
1	91 5005600134	Եկամտային հարկ հարկային գործակալի պարտավորություններից չազատված այլ գործատուների կողմից աշխատողներին վճարվող աշխատավարձից և դրան հավասարեցված այլ եկամուտներից
2	91 5005600159	Հարկային գործակալի կողմից պահված եկամտային հարկ քաղաքացիա-իրավական պայմանագրերի շրջանակում կատարված աշխատանքների (այդ թվում՝ մատուցված ծառայությունների) դիմաց ստացված եկամուտներից
3	91 5005600175	Եկամտային հարկ վարձու աշխատողի աշխատանքի ընդունումը ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու դեպքերում
Եկամտային հարկ ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներից		
1	91 5005600241	Եկամտային հարկ այլ ԱՁ-երի ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներից
Եկամտային հարկ պասիվ եկամուտներից		
1	91 5005600316	Եկամտային հարկ ռոյալթիներից
2	91 5005600324	Եկամտային հարկ փոխառություններից ստացված եկամուտներից
3	91 5005600340	Եկամտային հարկ գույքը վարձակալության տակուց ստացված եկամուտներից
4	91 5005600357	Եկամտային հարկ գույքի օտարումից ստացված եկամուտներից
Եկամտային հարկ այլ արբյուրներից ստացված եկամուտներից		
1	91 5005600415	Եկամտային հարկ առանց սահմանված կարգով պայմանագիր կնքելու դեպքերում հարկային գործակալի կողմից վճարված եկամուտներից (10 տոկոս)
2	91 5005600431	Եկամտային հարկ նվիրատվության և օգնության կարգով ստացված գույքից և դրամական միջոցներից

3	915005600456	Եկամտային հարկ քաղաքացիաիրավական պայմանագրերի կատարումից ստացված այլ եկամուտներից
4	915005600464	Եկամտային հարկ այլ աղբյուրներից ստացված եկամուտներից
Գույքահարկ		
1	915005080113	Գույքահարկ կազմակերպություններից
2	915005080212	Գույքահարկ ֆիզիկական անձանցից
Հողի հարկ համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող հողի համար		
1	915005100119	Գյուղատնտեսական նշանակության հողերի համար
2	915005100218	Ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար
Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումներ		
1	915005270219	Գործունեության մյուս տեսակների գծով ստացած հասույթի (հաշվեգրման եղանակով հաշվարկված) 0.2 տոկոսի չափով
2	915005270318	Հանքարդյունահանման գործունեությունից ստացված հասույթից 0.5 տոկոսի չափով

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84¹/₁₆,
 ծավալը՝ 3 տպ. մամուլ, տպաքանակը՝ 200:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
 Ստեփանակերտ, Հ.Հակոբյան, 25